**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**

**05.03.2025թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ԴԴ-ՄԱԾՁԲ-25/07» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «21» մայիսի 2025թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի ժ/պ Ա. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 05.03.2025թ. կնքված N «ԴԴ-ՄԱԾՁԲ-25/07» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.8 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի համաձայնությունը՝ Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ 504000 (հինգ հարյուր չորս հազար) ՀՀ դրամի չափով ֆինանսական հատկացումների նվազեցման, Պայմանագրի գնի փոփոխության (նվազեցման), Պայմանագիրը մասնակի լուծելու վերաբերյալ.

1.1. Պայմանագրի 4.1 կետում «756000 (յոթ հարյուր հիսունվեց հազար) ՀՀ դրամ» բառերը փոխարինել «252000 (երկու հարյուր հիսուներկու հազար) ՀՀ դրամ» բառերով,

1.2. Պայմանագրի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 1-ում «ընդհանուր գինը/ՀՀ դրամ» սյունակում նշված «756000» թիվը փոխարինել «252000» թվով, իսկ «ժամկետը» սյունակում «2025 թվականի հունվարի 3-ից մինչև դեկտեմբերի 29-ը ներառյալ» բառերը փոխարինել «2025 թվականի հունվարի 3-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ» բառերով,

1.3. Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 2-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը՝ 30.04.2025թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում Կատարողի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումն իրականացվում է Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

***Դատական դեպարտամենտ***

Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

ՀՎՀՀ՝ 02583241

Հ/Հ՝ 900011192151

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

**Ղեկավար՝ Ն. Գալստյան**

(ստորագրություն)

Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

***«ԷԿԵՆԳ» ՓԲԸ***

Հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 4

ՀՎՀՀ՝ 02707093

Հ/Հ՝ 1570004596000700

«Ամերիաբանկ» ՓԲԸ

**Տնօրենի ժ/պ՝ Ա. Խաչատրյան**

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 1
«21» մայիսի 2025թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 2
« 05 » մարտի 2025թ. կնքված
N «ԴԴ-ՄԱԾՁԲ-25/07» ծածկագրով պայմանագրի)

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*ՀՀ դրամ*

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | ընդամենը |
| 1 | 64211310/1 | էլեկտրոնային փոստի ծառայություններ | | 63000 | 126000 | 189000 | 252000 | 252000 | 252000 | 252000 | 252000 | 252000 | 252000 | 252000 | 252000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

**Ղեկավար՝ Ն. Գալստյան**

(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
***«ԷԿԵՆԳ» ՓԲԸ***
Հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 4
ՀՎՀՀ՝ 02707093
Հ/Հ՝ 1570004596000700
«Ամերիաբանկ» ՓԲԸ

**Տնօրենի ժ/պ՝ Ա. Խաչատրյան**

(ստորագրություն)
Կ.Տ